ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Լիտվայի Հանրապետություն (Վիլնյուս) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը.**
   Արման Ուդումյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Լիտվայի Հանրապետություն (Վիլնյուս), 2019 թվականի հոկտեմբերի 14-17-ը

4. **Հրավիրող կողմը.**
   Լիտվայի Հանրապետության սոցիալական ապահովության և աշխատանքի նախարարություն

5. **Գործուղման նպատակը** */աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/.*
   Երկկողմ հանդիպումների անցկացում՝ պլանավորելու երկու նախարարությունների միջև երկկողմ համագործակցության կոնկրետ գործողությունները (Լիտվայի Հանրապետության սոցիալական ապահովության և աշխատանքի նախարարության և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջև 2017 թվականի հոկտեմբերի 4-ին Երևանում ստորագրված և 2018 թվականի մարտի 8-ին ուժի մեջ մտած «Աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտներում համագործակցության մասին» համաձայնագրի շրջանակներում):

6. **Քննարկված թեմաները.**
   Օր 1. Աշխատանքային վեճերի հանձնաժողովի (ԱՎՀ) լիազորությունները, գործունեության ձևաչափը և մեխանիզմները:

   ԱՎՀ-երի աշխատանքները համակարգում է Աշխատանքի պետական տեսչության ԱՎՀ-երի աշխատանքների կազմակերպման բաժինը:
   Աշխատանքային վեճերի քննությունը ԱՎՀ-երում մինչդատական պարտադիր ընթացակարգ են:

Ներկա պահին կային գործող 21 հանձնաժողովներ, որոնցից 7-ը՝ Վիլնյուսում, իսկ մյուսներն այլ քաղաքներում: ԱՎՀ-երի աշխատանքները կանոնակարգվում են Լիտվայի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով, կանոնակարգով, հանձնաժողովի անդամների վարձատրության կարգով:

ԱՎՀ-երը բաղկացած են երեք անդամից. Նախագահ, գործատուների միության ներկայացուցիչ, արհմիութենական կազմակերպության ներկայացուցիչ:

ԱՎՀ-ի նախագահը նշանակվում է աշխատանքի գլխավոր պետական տեսուչի կողմից: Նա քաղաքացիական ծառայող է և պետք է ունենա իրավաբանական բարձրագույն կրթություն: Հանձնաժողովի նախագահի գործառույթների մեջ մտնում է միայն նախագահի աշխատանքների կատարումը և բացի այդ աշխատանքներից նա այլ գործառույթներ չունի:

ԱՎՀ-երի կազմում ընդգրկվող անձանց անունների ցանկը հաստատվում է Աշխատանքի գլխավոր պետական տեսուչի կողմից և թարմացվում տարեկան մեկ անգամ:

ԱՎՀ-երը քննում են գրեթե բոլոր անհատական աշխատանքային վեճերը. աշխատանքի վարձատրություն, աշխատանքային պայմանագրի պայմանների կատարում, արձակուրդների տրամադրում, առանց օրինական հիմքերի աշխատանքային պայմանագրի լուծում, նյութական վնասի հատուցում, մրցակցության կամ գաղտնիքի պահպանման վերաբերյալ համաձայնագրեր, խտրականություն, աշխատանքի վայրում դժբախտ դեպքերի կամ մասնագիտական հիվանդության հետևանքով պատճառված վնասի հատուցում և այլն, ինչպես նաև իրավունքին վերաբերող կոլեկտիվ աշխատանքային վեճերը:

ԱՎՀ-ի միջոցով աշխատանքային վեճերի լուծման մեխանիզմն աշխատանքային վեճերի լուծման բավականին արդյունավետ և օպերատիվ համակարգ է: Բացի հեշտացված համակարգ լինելուց, այն ունի նաև այն առավելությունը, որ աշխատանքային վեճերի քննությանը ներգրավված են նաև սոցիալական գործընկերները: Այդ գործընթացները նպաստում են նաև սոցիալական գործընկերության և սոցիալական գործընկերների միջև բանակցությունների վարման գործընթացների զարգացմանը:

Օր 2. Լիտվայի Աշխատաշուկայի ակտիվ ծրագրերը /ներառյալ աշխատաշուկայում անմրցունակ անձանց համար նախատեսված ծրագրերը:

Ներկայացվեց Զբաղվածության ծառայության գործունեությունը, վերջին տարիների բարեփոխումները, Լիտվայի աշխատաշուկայի մարտահրավերները և զբաղվածության քաղաքականության ակտիվ ծրագրերը: Կառույցի բարեփոխումների հիմքում դրվել էր անհատականացված ծառայությունների մատուցման սկզբունքը, յուրաքանչյուր նպատակային խմբի համար (հաշմանդամություն ունեցող անձինք, երկարաժամկետ գործազուրկներ, նախկին զինվորականներ) առանձնացված էին մասնագիտացված խորհրդատուներ:

Բարեփոխումների շրջանակներում ներդրվել էին նաև էլեկտրոնային ծառայությունները, ինչպես շահառուների առցանց գրանցումը, էլեկտրոնային ստորագրությունը):

Զբաղվածության պետական ծառայությունը ղեկավարում է տնօրենը: Կառույցն ունի տնօրենի ենթակայությամբ գործող 4 բաժին (Որակի կառավարման և

վերահսկողության, Տեղեկատվության, Ծրագրերի և միջոցառումների պլանավորման, Միջոցառումների իրականացման հսկողության) և Տվյալների պաշտպանության 1 մասնագետ, 2 վարչություն (Աշխատաշուկայի և զբաղվածության քաղաքականության իրականացման և Ֆինանսների, իրավաբանական և գնումների): Աշխատաշուկայի և զբաղվածության քաղաքականության իրականացման վարչության կազմում գործում է 3 բաժին (Մեթոդաբանության և մոնիտորինգի, EURES ազգային համակարգման, Միջոցառումների իրականացման) և Զանգերի կենտրոնը, իսկ Ֆինանսների, իրավաբանական և գնումների վարչության կազմում՝ 9 բաժին (Ծրագրերի հաշվապահության, Միջոցառումների հաշվապահության, Իրավաբանական, Հանրային գնումների, Աշխատակազմի կառավարման, Գույքի կառավարման, Ինֆորմացիոն տեխնոլոգիաների սպասարկման, Ինֆորմացիոն տեխնոլոգիաների զարգացման, Փաստաթղթերի կառավարման):

Կառույցի կազմում երկրի տարբեր մարզերում գործում է նաև թվով 5 հաճախորդների սպասարկման վարչություն, որից յուրաքանչյուրի կազմում առկա են շահառուների սպասարկման բաժիններ (ընդամենը 60) և երիտասարդական կենտրոններ (ընդամենը 10) (կառուցվածքը կցվում է):

Զբաղվածության պետական ծառայությունն իրականացնում է զբաղվածության ակտիվ ծրագրեր, մասնավորապես՝ շահառուներին հմտությունների տրամադրման ծրագրեր (մասնագիտական ուսուցում, աշկերտության, պրակտիկայի, հմտությունների ճանաչման ծրագրեր) զբաղվածության խրախուսման, աջակցող զբաղվածության և վերականգնման, աշխատատեղերի ստեղծման և փոքր բիզնեսի աջակցման, այլ վայր տեղափոխումը խթանող ծրագրեր:

Բացի ակտիվ ծրագրերից գործազուրկներին որոշակի պայմաններին բավարարելու դեպքում տրվում էր նաև գործազրկության նպաստ (նվազագույնը 129,15 եվրո, առավելագույնը՝ 721,28):

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Հանդիպումներ եմ ունեցել՝

- Լիտվայի Հանրապետության սոցիալական ապահովության և աշխատանքի նախարարի տեղակալ Էգլե Ռադիսաուսկիենեի,
- Զբաղվածության ծառայության տնօրեն Լիգիտա Վալալտեի, Աշխատանքի պետական տեսչության աշխատանքային վեճերի հանձնաժողովի նախագահ Ալբերտաս Օլեսկևիչի,
- Աշխատանքի գլխավոր պետական տեսուչի տեղակալ Դալիուս Ցեպոնասի հետ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

- Պայմանավորվածություն ձեռք բերվեց 2020 թվականի ընթացքում ուսումնական այց կազմակերպել Լիտվա՝ սոցիալական աջակցության մոդելների ուսումնասիրության համար,

- Լիտվայի Զբաղվածության ծառայության հետ համատեղ, Արևելյան գործընկերության շրջանակներում, համատեղ ծրագրերի մշակման համար:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Լիտվայի Սոցիալական ապահովության և աշխատանքի նախարարի տեղակալ Էգլե Ռադիսաուսկիենեի հետ հանդիպման ժամանակ առաջարկել եմ Եվրամիության TAIEX գործիքի միջոցով լիտավական փորձագետներին հրավիրել Հայաստան՝ Լիտվայի աշխատանքային վեճերի հանձնաժողովի գործունեությունը ներկայացնելու և Հայաստանում ԱՎՀ-ի հնարավոր ներդրման հարցում աջակցելու նպատակով: Նախարարությունն առաջիկայում կնախապատրաստի TAIEX գործիքից օգտվելու համապատասխան հայտ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

21.10.2019